

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐԵՆ՝

Ե Ր Փ

Մ Ի Ր Ա Ն Ե Փ Ա Յ Լ արեմուտքին յանդիման
Հիանայինք միմեանց մօտիկ ձեռք ձեռքի.
Սակայն աւանդ անդարձ կորաւ յաւիտեան,
Այն քաղցր ընկալն իմ սիրազուրկ խեղճ կեանքի:

Դու երգուեցար սիրել ջըմահ ընթոյղին՝
Սակայն ի սէր անցուկ փառացն աշխարհին,
Շուտ ժխտեցիր քոյ երգումը սրտագին,
Մատնելով խիղճն բիւր աղիտից և չարի:

Սակայն մերձ է մահըս և մերձ գերեզման
Գուցէ ցամաքիմ անձայն ինչպէս բոյս դաւար.
Սակայն հոգիս պիտի զոռայ շանթի նման,
Քեզմով կ'ապրէր՝ այլ դու նորան մոռացար:



Ե Ա Մ Շ Ջ Ի Կ Ի Ե Ր Փ Ը

Վեր վերցուց արև, գլուխըն իւր կարմրուկ,
Սառնակոյտ բարձից,
Ելաւ իւր՝ ձիւնի անկողնից փափուկ,
Մըշուշի միջից:
Հէ՛յ, հույ իմ ձիւններ, ձայնեցէ՛ք բոժոժ.
Ճանապարհն ահա տեսնելի որոշ:

1. Սոյն՝ ո՛չ այնքան քերթողական աւելնով գրութիւնները հրատարակելնուս նպատակը տա,
դանդաւոր թատրերգակի արտադրութիւնները մոռացութենէ և կորուստէ ազատելու դիտումով է
միայն:

Ձիւնը փայլում է, ծիրանի գօտւոյն
 Եօթներանգներով,
 Դաշտը տխրաժպիտ, ծածկի արծթէգոյն,
 Բալխըին հետքերով,
 Հէյ, հո՛ւյ... իմ ձիաներ, շարժեցէ՛ք բոժոժ,
 Մեր ճանապարհը, տեսներէի որոշ:



Ինձ էլ տո՛ւր հայրիկ, խըմել մի բաժակ
 Վօթքին պատուական.
 Նաև մուշտակը ինձ միշտ պահեն տաք
 Եւ մարմնոյս ոյժ տան,
 Հէյ հո՛ւյ իմ ձիաներ, շարժեցէ՛ք բոժոժ,
 Մեր ճամբին ահա, տեսներէի ծուռ կոտորշ:



Այ Աստուած. ահա կրկին կը մըթնէ
 Երկինքը կապոյտ,
 Ու դաշտում առատ ձիւն կը սերմանէ
 Քամին ի պըտոյտ.
 Հէյ հո՛ւյ... իմ ձիաներ, հընչեցէ՛ք բոժոժ,
 Դեռ չէ ծածկըւեր ճամբան անորոշ:



Բայց երկինք թըւի, փըլչում է յերկիր,
 Դարձած ձիւն ու բուք.
 Ծածկեն ճանապարհն, ձիանքըն ու բալխիր,
 Պատանք սառնասուգ.
 Է՛իս մա, իմ ձիաներ, մի՛ ձայնէք բոժոժ,
 Ահա գան գայլերն մեզ պատռել յօշ յօշ:

1885. սեպտեմբ. 19



Տ Ե Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Նստած խաղաղ սենեակումը
 Ուր բնակի իմ մրտերիմը,
 Յուզուած հոգւով և մեղամաղձ
 Կու լայ հոգիս, արտասուաքաղց:

Պատուհանից փոքր և կոկիկ,
 Ուր տեղից գայ լոյսը մեղմիկ,
 Տեսնեմ գաւթն ու չոր ծառեր,
 Որոց տերեւը, այրել է ձմեռ:
 Իրենց ճիւղեր, անզարդ ցամաք,
 Խառնափնդոր և աւերակ,
 Թանկ և անոյշ են ինձ համար,
 Յիշատակովն զարնան դալար:
 Այժմ թէպէտ մերկ են նոքա,
 Բայց երբ շուտով զարունը գայ,
 Յայնժամ նոցայ վրայ կը թառին
 Երգիւնք, սոխակ, բնութեան բարին:
 Իսկ այս սիրտս որ արդ ձեզ նրման,
 Ցամաք է տխուր զինչ գերեզման,
 Եւ չունի ո՛չ յոյս ո՛չ զարուն
 Եւ ոչ աղի ցօղն աչքերուն:
 Երնէկ լինէր թէ մեռնէի,
 Այդ ծառին մօտ ես թաղուէի:
 Եւ գէթ այս իմ փրտած մարմին,
 Ոյժ տար նորայ կեանք տուող հողին:

Պ. ԱՂԱՄԵԱՆ



Լ ՈՒՆԱՆՈ՛՝

Առ Պ. Հայկ Ղուլիքեւիսեանց
 Դոկտ. ֆիլիսոփ. հայդելբերգ

Ո՛վ, Լ՛ուկանօ. ալ չեմ էական ըսկեպտիկ՝
 Լամբարի մը բանտին տակ կեանքը դրժող:
 Չես վետիկտիր. լուռ ես. ի՞նչ փոյթ. չէ՞ որ դող,
 Թափ ու կշռոյթ կու տաս մարմնոյս զգայազիրկ:

Ինչո՞ւ, աւաղ, երբեմն անզուսպ թիթեռնիկ՝
 Օր մը հիւանդ, մոռցայ բնութիւն, յոյս ու հող.
 Դարձի՞ գալու համար տեսքէդ կապտաշող
 Ուր կը նըկին այս լեռներն ալ անառիկ: